600.0263.15.06.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2007 թվականի №263
ք. Երևան

«ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №60 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՓՈՓՈԽՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿԻ 5.Ա.1 ԿԵՏԻ Գ) ԵՆԹԱԿԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի №336Ն որոշմամբ հաստատված «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության №60 լիցենզիայի փոփոխված տարբերակի 5.Ա.1. կետի գ) ենթակետը, որի համաձայն «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերությունը լիազորված է ծառայությունների մատուցման տարածքում բացառիկ իրավունքի հիմքերով մատուցել հանրային շարժական ծառայությունները, բացառությամբ GSM ծառայությունների, շարժական արբանյակային ծառայությունների և շարժական մասնագիտացված ռադիոծառայությունների,

բ) «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության 2007 թվականի մայիսի 24-ի №231/07 գրությունը՝ 3G համակարգերի միջոցով իրականացված ծառայությունները հանրային շարժական ծառայություններ համարվելու մասին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պաշտոնական պարզաբանում ստանալու վերաբերյալ և հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Պաշտոնապես պարզաբանել, որ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի №336Ն որոշմամբ հաստատված «ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերության №60 լիցենզիայի փոփոխված տարբերակի 5.Ա.1. կետի գ) ենթակետով նախատեսված հանրային շարժական ծառայությունների տեսակ են հանդիսանում նաև 3G համակարգերի միջոցով իրականացված ծառայությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
15 հունիսի 2007թ.